




« ԸԻՆԷՄՊՏ »

ԱՆՏՐԱՆՓՈՒԿ ԴԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐԷ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

☎. 094 14 84 10
E.Φ.Π.S shinexprtlc@gmail.com

"SHINEXPRT" LLC
8/49-1 TATERAKAN ST., VANADZOR,
LORI REGION, RA



No 33SU-UU52F-25/15

Նախագծող՝ «ԷՖ ԱՐՏ ՊՐԵՄԻՏ» ՍՊԸ

Տնօրեն՝ Է. Եղիազարյանին

ՀՀ Տավուշի մարզի S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) -Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600-կմ7+682 հատվածի հողային պատահարի վերականգնման և հենապատի կառուցման աշխատանքային նախագիծ

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) -Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600-կմ7+682 հատվածի հողային պատահարի վերականգնման և հենապատի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախագծերի նախահաշվային արժեքը կազմնում է 49194.86 հազ. Դրամ ներառյալ Ա.Ա.Հ-ն:

(փորձաքննության եզրակացություն առդիր 3 էջ)



Ե. Ասատրյան

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության և ներկայացվել նախագիծ կազմված 2 ավրոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Ճարտարապետաշինարարական մաս

Սույն նախագծով նախատեսված է ՀՀ Տավուշի մարզի S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600-կմ7+682 հատվածի հողային պաստառի վերականգնման և հենապատի կառուցման աշխատանքներ:

Նախագիծը կազմվել է ըստ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տրված առաջադրանքի:

Ներկայացված տեղամասում 2025 թվականի օգոստոս ամսին կատարվել է ուսումնասիրություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն տրված առաջադրանքի անհրաժեշտ է կատարել S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600-կմ7+682 հատվածի հողային պաստառի վերականգնման և հենապատի կառուցման աշխատանքներ : Նախագծով նախատեսվում է .

1. Ստորին հենապատի կառուցման աշխատանքներ
2. 0,4x0,6x2,5մ չափսի եզրապատերի (параметр) իրականացում
3. Б-1-20-50 վաքի տեղադրում
- 4 . Ճանապարհային պատվածքի վերականգնում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ

Նախագծային աշխատանքները կատարվել են ՀՀՇՆ 31-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմաների, AutoCad և Civil3D համակարգչային ծրագրերով:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրին: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամքով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ բնահողից և շին . աղբից տեղափոխելով այն լցակայան:

Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փատաթղթերը. ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» և ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպում»:

Շինարարության ժամանակ հաշվի առնել գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական կառուցվածքները /գազատար, ջրատար խողովակաշարեր, կապի և էլեկտրո մալուխներ/ տեղյակ պահելով համապատասխան կազմակերպություններին:

Բնապահպանական բոլոր միջոցառումները պետք է իրականացնել բնապահպանական կառավարման պլանին համապատասխան:



Նախահաշիվ

S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600- կմ7+682 հատվածի հողային պաստառի վերականգնման և հենապատի կառուցման աշխատանքներ

Նախահաշվի քաջատրագիր

Հաշվարկը կատարված է ՀՀ կառավարության N 1656-Ն առ 17.10.2024 թ. «Շինարարական աշխատանքների գնազոյացման նախահաշվային նորմերի կարգի» որոշման համաձայն:
Նախահաշիվը կազմված է 1984 թ. գների և նորմերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված կողմնորոշիչ գները և ինդեքսները:
Նյութերի արժեքը հաշվարկված է 2025 թ. թիվ 8 «Ինֆորմացիոն տեղեկագրի» համաձայն, կիրառելով համապատասխան գործակիցները:

Ուղղակի ծախսերի վրա հաշվարկված են

Վերադիր ծախսեր	13.3%
Շահույթ	11%
Շինարարության համար կառուցվող ժամանակավոր շենքեր և կառույցներ	1.80%
Կլիմայական պայմանների ազդեցությունը շինարարական աշխատանքների վրա	0.35%
Չնախատեսված ծախսեր	3%
Տեխնիկական հսկողություն	2.0%
Հեղինակային հսկողություն	0.6%
ԱԱՀ	20%

Միավոր գներ

1. Աշխատավարձի հաշվարկը կատարված է

1984 թ. նորմատիվային աշխատատարության հիման վրա, ընդունելով 2437.49
շինարարությունում զբաղված բանվորների միջին (ամսեկան) աշխատավարձը (դրամ), կիրառելով համապատասխան հաշվարկվող ինդեքսը

2. Մեքենաների շահագործման ծախսերի հաշվարկը կատարված է

1984թ. նորմատիվային ծախսի հիման վրա կիրառելով համապատասխան հաշվարկվող ինդեքսը 3048.57

3. Նյութերի արժեքների հաշվարկը կատարված է

1984թ. նորմատիվային ծախսի հիման վրա կիրառելով հետևյալ գործակիցները

Նյութերի տեղափոխման, (տրանսպորտային) ծախսեր (Տավուշի մարզ) 13.20%

Նորմատիվներով չհաշվարկվող (ոչ հիմնական) նյութեր 5%

Նյութերի պահեստավորման և նախապատրաստական ծախսեր 2%

Նախահաշիվը կազմված է N08 2025 թ. ինֆորմացիոն տեղեկագրի գներով

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինարարական ՄՊԸ»-ն նշում է, որ՝

- Նախագծային լուծումները համապատասխանում են շինարարության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
- Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:



3. Նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամգակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից «Շինեքսարտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ

Գլխավոր ինժեներ՝

Փորձագետ՝



Ա. Զալյան

Գ. Գուլանյան